https://en.radiofarda.com/amp/khamenei-representatives-declare-support-for-azerbaijan-in-nagorno-karabakh-conflict/30872059.html?fbclid=IwAR0A6IrqiSR3OiqF0Lc6lTCwKW9GPPv1tuyF-3hALlJ_tCXN6LFpAaDnEuQ

Khamenei Representatives Declare Support For Azerbaijan In Nagorno-Karabakh Conflict

Խամենեիի ներկայացուցիչները հայտարարում են, որ աջակցում են Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում

10. 03. 2020թ.

Նկարը վերցված է 2020թ. սեպտեմբերի 30-ին հրապարակված տեսանյութից, որում պատկերված է Ադրբեջանի զինված ուժերի բազմաթիվ հրթիռային կայանքներից մեկը, տեղադրված Ադրբեջանական անհայտ վայրում, որը բախումների ժամանակ հարվածներ է հասցնում Լեռնայ ին Ղարաբաղի առանձին շրջանների վրա:

Իրանի Գերագույն առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեիի ներկայացուցիչները, Արդաբիլի, Արևելյան Ադրբեջանի, Արևմտյան Ադրբեջանի և Զանջանի նահանգներում աննախադեպ քայլի են դիմել՝ հանդես գալով համատեղ հայտարարությամբ՝ ի պաշտպանություն Ադրբեջանի Հանրապետության:

«Անկասկած Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, և համաձայն Շարիաթի, իր կառավարության կողմից տարածաշրջանը վերագրավելու քայլը լիովին օրինական է,և

համապատասխանում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չորս բանաձևերին։» պնդում են Խամենի ներկայացուցիչները։

Հայտարարությունը իրենց ստորագրություններով հաստատել են բարձրաստիճան հոգևորականներ Հասան Ալեմին, Մոհամադ Ալի Ալ-ի Հաշեմը, Ալի Խաթամին և Մեհդի Քորեյշին:

Հինգշաբթի օրվա իրենց հայտարարության մեջ համոզմունք են հայտնել, որ «Ադրբեջանի կառավարությունը գործել է օրենքի և կրոնի շրջանակներում ՝ իր հողերը վերադարձնելիս, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չորս բանաձևը իրականացնելիս»:

Երեք տասնամյակ առաջ Հայաստանը գրավեց Լեռնային Ղարաբաղը , ինչպես նաև յոթ այլ թուրքախոս տարածքներ: Այդ ժամանակվանից ի վեր ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը չորս բանաձեւ է տարածել, որոնք կոչ են անում հողերը վերադարձնել Ադրբեջանի Հանրապետությանը:

Հայաստանից բացի, ոչ մի այլ երկիր չի ճանաչել այդ հողերի օկուպացիան և «Արցախի Հանրապետության» ինքնահռչակ կառավարությունը:

Անցյալ շաբաթ առավոտյան Լեռնային Ղարաբաղում սկսվեցին համատարած բախումներ ադրբեջանական և հայկական ուժերի միջև, և երկու կողմերն էլ մերժեցին զինադադարի կոչերը:

Իրանի թյուրքալեզու նահանգներում Խամենեիի ներկայացուցիչների համատեղ հայտարարությունը, կարծես, համահունչ է Խամենեիի գրասենյակի դիրքորոշմանը, որը ենթադրում է աջակցություն Ադրբեջանի Հանրապետությանը:

«Ցավոք, երկու բարեկամ երկրների (Իրան և Ադրբեջան) հարաբերությունների միջև վերջերս տարաձայնություններ եղան, և Իսլամական Հանրապետությանը մեղադրեցին դավաճանության մեջ (ընդդեմ Ադրբեջանի)», - ասվում է հայտարարության մեջ ՝ նախազգուշացնելով «թշնամիների հոգեբանական պատերազմի մասին»:

Ավելին, հայտարարության մեջ արցախյան հակամարտության ընթացքում զոհված ադրբեջանցի զինծառայողներին հիշատակում են որպես «Ադրբեջանի մեծ ազգի նահատակներ» և մաղթում են «երկնային բարձր կոչումներ»:

Սակայն վերջին օրերին՝ Հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ, Իրանը մեղադրվում է Հայաստանին օժանդակելու մեջ:

Սոցիալական ցանցերում պատկերներ են շրջանառվում, թե իբր ռուսական բեռնատարները Իրանի տարածքով զենք են տեղափոխում Հայաստան:

Այնուամենայնիվ, Իրանի իշխանությունները բազմիցս հերքել են Հայաստանին օժանդակելու փաստը:

Չորեքշաբթի, սեպտեմբերի 30-ին, Իրանի նախագահ Հասան Ռոհանիի աշխատակազմի ղեկավար Մահմուդ Վաեզին հերքեց լուրերը այն մասին, որ Իրանը օգնում է Հայաստանին

հարևան Ադրբեջանի Հանրապետության հետ պատերազմում ՝ որակելով դրանք որպես «անհիմն լուրեր», միտված Թեհրան-Բաքու հարաբերությունների խափանմանը:

Mehr News պետական լրատվական գործակալությունը (MNA) հոկտեմբերի 2-ին հաղորդել է, որ «Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ պայքարի ընթացքում քսանից ավելի ականանետեր են ընկել Արդաբիլ նահանգի հյուսիս-արևմուտքում գտնվող իրանական Ասլանդուզ շրջանում»:

Կիրակի՝ ռազմական բախումների առաջին օրվանից ի վեր, Իրանի տարածքում բազմաթիվ ականային հարվածներ են հասցվել Ադրբեջանական կողմից: Իրանը, Եվրամիությունը, Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և մի շարք այլ երկրներ կոչ են արել անհապաղ դադարեցնել զինադադարը Լեռնային Ղարաբաղում:

թարգմանությունը՝Դոլարես Հովհաննիսյանի

մեթոդիստ՝ բգթ. Հասմիկ Մատիկյան